ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ Է ԿՆՔԵԼ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ

21.05.2015 18:42

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Հովհաննես Մանուկյանը այսօր՝ մայիսի 21-ին, ստորագրել են համագործակցության մասին փոխըմբռնման հուշագիր:

Փաստաբանների պալատի նախագահը նշել է,-‘**Հուշագրի հիմքում երկու կողմերն էլ հաշվի են առել մարդուն, մարդու իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունը, իսկ դա նշանակում է, որ այս հուշագրի շահառուն լինելու է քաղաքացին, հասարակությունը**’:

ՀՀ արդարադատության նախարարը կարևորել է փաստաբանների գործունեությունը՝ նշելով, որ,-‘**Փաստաբանները և փաստաբանական ինստիտուտը ոչ միայն մեր երկրի համար կարևորագույն, մեր իրավական համակարգի առանցքային դերակատարություն ունեցող ինստիտուտներից մեկն է, այլ նաև մեր ամենօրյա գործունեության մեջ կարևորագույն գործընկերներն են փաստաբանները**’:

Փաստաթղթի շրջանակում կողմերը կհամագործակցեն մի շարք, մասնավորապես՝ փաստաբանական գործունեության և Մարդու իրավունքների բնագավառին առնչվող իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ կարծիքների փոխանակման, արդարադատության նախարարության գործունեության ոլորտում փաստաբանների կողմից մասնագիտական պարտականությունների կատարման հետ կապված խնդիրներ առաջանալու դեպքում դրանց քննարկելու և լուծման կապակցությամբ համապատասխան միջոցներ ձեռնարկելու ուղղություններով:

Հուշագրի շրջանակում երկու կառույցները կնշանակեն մեկական պատասխանատու ներկայացուցիչ, ովքեր կհամակարգեն աշխատանքները և ահազանգեր լինելու դեպքում անհապաղ կներկայացնեն տեղեկատվությունը՝ համապատասխան առաջարկություններով:

Հուշագրի տեքստին կարող եք ծանոթանալ այստեղ:

ՀՀ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



ՀՀ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })